Ախմոն կանանացի, եւ Յուղայ Խոկարիովտացի, որ մատնեց
Յիսուսին։

Հաց ՚ի սորանց Յիսուս ընտրեց էլի եօթանասուն եւ
երկու աշակերտ, խրատ տւաւ նորանց եւ երկու երկու ու-
ղարկեց Նրէաստանի զանազան քաղաքներ քարոզելու։

Յէսուսի դուռծ ինն երանունիւնուր:

Առաքելոց ընտրութիւնից յետոյ Յիսուս սկսաւ խրատ
տալ նորանց, եւ երբ շատ ժողովուրդ եկան կիտուցան՝
նստաւ Յիսուս մի տափարակ տեղ, աչքերը գձեց գէպ՚ի
աշակերտները եւ սկսաւ քարոզել եւ ասել. „Երանի հոգւով
աղքատներին, պատճառ որ նորանցն է երկնքի արքայութիւնը։
Երանի հեղերուն՝ նոքա կժառանգեն երկերը։ Երանի՝ որ
քաղցած եւ ծարաւ կման արդարութեան համար, նորա
կշտանան։ Երանի ողորմածներին՝ նոքա ողորմութիւն կդտնեն։
Երանի նորանց՝ որ սուրբ են սրտով, նոքա Աստուծոյ որդիք կը-
կոչւին։ Երանի՝ որ հալածած կլինին արդարութեան համար՝
նորանցն է երկնքի արքայութիւնը։ Երանի է ձեզ, երբ
անարդում եւ չարչարում լինին ձեզ եւ ամէն չար բան սուտ

ասում լինին ձեր վրայ իմ պատճառաւ: Ուրախ կացէք, շտ
է ձեր վարձը երկնքումը այս լինին լուսն ու լինու
կուսիչ միամբ ու զայ վճար բնադր մերոն զգման
բնուած հրու ով Յէսոսի աւրազունինը: Այս լուսնը
զար ո յո առաջապար միա չափանի ազը զգմանը:

Տէրն մեր Յիսոս Քրիստոս մլրտութիւնից յետոյ
վրայ երկրորդ տարին սկսաւ համարձակ քարողել շրէց
ժողովարաններում, նորա քարողութեան գլխաւոր նպատակն
այն էր, որ սոլուսցնի մեղաւորներին զղաւոր ապաշխարել,
և թէ առանց ապաշխարութեան կարող չեն մեղաւորները
փրկւիլ յորդորում էր Վատուծոյ օքէնիները պահպաննել, արհա-
մարհել աշխարհիս անցաւոր մեծութիւնը: Շրամայում էր
սուրբ սիրով սիրել ամենին, առաւել թշնամիներուն, ներել
միմեանց և ողորմել աղքատներին. Հնաղանդ լինել տէրներին
ինչպէս Վատուծուն, փախչել փարիսեցւոց կեղծաւորութիւն-
ներից, որոնք երեսանց սուրբ էին երեսում, բայց ներսից
լիքն էին ապականութիւնով, սովորացնում էր ամենին միշտ
աղօթք անել և ամեն նեղութիւնում Վատուծուն դիմել, իսկ
ամեն բանից աւել սիրել, ճանաչել և պաշտել և վախենալ
նորանից: Կա ինքն ամեն բանը Վատուծուց էր խօսում, և
նորա վարձը ամեն քառարինութեանց օրինակ էր, սրաով չեղ
և խօնարհ էր, աղքատութիւնից և ուրիշ տեսակ մարդկան-
ցից քաշած նեղութիւնները աչքին չեր երեսում, զղացած
մեղաւորների վրայ շատ ինամբ ուներ, և անզեղջներին հոգ-
ուով չափ աշխատում էր շահել նորանց: Կա իր ամեն գործ-
քերի մէջ, ուրիշ բանին չեր նայում, բայց միայն օք Վա-
տուծոյ փառքն էր ուղղում, շատ անզամ բոլոր գիշերը աղօթ-
քով էր անցկացնում: Կա ինքն սովորացրեց աշխերուաց այս
աղօթքը ու այր մեր որ յերկինս:

Յէսոսի Պայծառակերպութիւններ:

Շրէստանի ամեն կողմերը քարողելուց յետոյ՝ Յիսուս
գնաց Կեսարիա քաղաքի կողմը, հարցնում էր աշակերտնե-
րին թէ մարդիկ ի՞նչ են կարծում ինձ համար՝ թէ ես ովեմ,
նոքա պատասխան տւին, „Ո՞չկը ասում է՝ թէ Յովհաննէսն
ես, միւսը՝ թէ Եղիան ես, մի քանիսն՝ թէ Երեմիան ես,
կէսն էլ ասում է՝ թէ մարդարէից մէկն ես ու Դակ գուք ի՞նչ էք
կարծում՝ թէ ով եմ ես”: Պատասխան տւաւ Պետրոսը,
„Դու ես Քրիստոս՝ Վատուծոյ օրդինու: Առանից յետոյ
Յիսուս վեր առաւ աշակերտներից միայն Պետրոսին, Յակո-
բոսին և Յովհաննէսին և գնաց թափոր լեառը, և այն տեղ
երբ աղօթք էր անում՝ նորա կերպարանքը փոխեցաւ և
արեգակի պէս լուսաւորեցաւ նորա երեսը և հանդերձը փայ-
լում էր ձիւնի պէս. Ո՞վսէս և Եղիա մարդարէքը երևե-
ցան և սկսան խօսիլ Յիսուսի հետ նորա չարչարանաց և մահուան
վերայ, որ Երուսաղէմումը պիտի պատահէր: Բայց Յիսուս
պատուիրեց՝ այս տեսիլքը ոչ ոքի չասել մինչև որ ինքը յա-
րութիւն առնի:

Յէսոսի հրաշագործութիւններ:

Յ ա ր ը Գ ի ն ի կ ո ւ ե լ ւ լ ւ կ ա ն ա մ ի կ ո ւ մ ի :

Կանա Վալիեացւոց քաղաքումը, երբոր Յիսուս իր մօր
հետ միասին հարսանիկումը նստած էին, ուրախութեան ժա-
յանակը գինին պակսեցաւ: Վատուածամայրը յայտնեց Յիսու-
սին, թէ գինի չունին: Յիսուս պատասխան տւաւ „Կին
դու, մեզ ի՞նչ դեռ իմ ժամանակս չէ հասելու: Բայց
Յիսուս մօր խօսքը պատւելու համար՝ հրամայեց ծառայից,
որ դատարկ թակոյիները (փարչերը) լքցնեն ջրով, յետոյ
տեսան որ այն ջուրը անոյշ գինի է փոխել:

մատգառդաղնի սորան բեշելը եւ աշահելոց հրաշով յուն

բարութեալու:

Գալիկայումը մէկ իշխանի որդի հիւանդ էր, նորա հայրը եկաւ Յիսուսի մօտ և աղաջում էր նորան, որ զնայ Կափառնաում և բժշկի նորա որդուն, որ մերձ ի մահ հիւանդ էր. Յիսուս ասաց նորան „Գնա՛, քո որդին կենդանի էն. նա էլ հաւատաց և գնաց: Դեռ տուն չհասած, ծառաները ճանապարհին առաջ եկան և աչբալոյս արին՝ թէ քո որդին ողջ է: Արցըրոց ծառաներին „Ե՞րբ թողաւ ջերմը (տաքութիւնը)“¹, նորա ասացին „Երեկ եօթներորդ ժամուն“: Այս այն ժամուն էր բժշկուել, որ ժամուն ասաց Յիսուս՝ թէ քո որդին կենդանի է: Ա ասն որոյ և հաւատաց ինքն և իր բոլոր տունը: Այսանից յետոյ Յիսուս գնաց Կափառնաում և քարոզեց այն տեղ, և շատ հիւանդներ և գիւահարներ բժշկեց:

Մէկ անգամ՝ Յիսուս Գեննեսարեթի ծովեզերքումը տեսաւ երկու դատարկ նաւ, որոնք Աիմոն Պետրոսի և Յակոբոսի և Յովհաննու Օերեթեայ որդւոցն էին. և այն տեղ շատ ժողովուրդ լինելու պատճառաւ՝ մտաւ Պետրոսի նաւը և քարոզում էր ժողովորդոց: Յետոյ ասաց Աիմոն Պետրոսին, „Գնա՛ փոքր առաջ և գձիր ուռկանը (դամբը), նա պատասխան տւաւ, Ա արդապետ, ողջ գիշերս աշխատ եղաք և կալաք ոչինչ“². և երբ որ գձեցին ուռկանը, ձկանց շատութիւնից պատռուում էր ուռկանը մինչև որ օգնութիւն հասաւ միւս նաւը, և երկու նաւերն էլ ձկներով այնքան լքցւեցան, որ համարեա՛ թէ լնկղմում էին ծովի մէջ: Պետրոսը և միւսները այս տեսնելով վախեցան, Յիսուս սիրտ տւաւ, և անաց, „այսուհետեւ մարդիկ կ'որսաք: Ա որա էլ թողին ամենը և գնացին Յիսուսի հետ:

Յօնան իսպանաց առևէ պատրաստոցնելը. Տեսաբեր հաղ է-

Յայրոս կշտանի աղջիան բեշելը:

Երբ Յիսուս Գալիկայի ծովից՝ Գերգեսացւոց երկիրն էր գնում, սկսաւ նաւի մէջ քնել: Յանկարծ սաստիկ կատղեցան ծովի ալիքը (տալզաները) և ալիքոծութիւն եղաւ, աշակերտները վախեցան և զարթացրին Յիսուսին ասելով՝ „Ա արդապիւտ, աղատիր մեզ“: Յիսուս ասաց նորանց „թերահաւատներ, ինչի՞ էք վախենում“: Յետոյ հրամայեց ծովին և գաղարեցրոց ծովի կատղած ալիքը: Այս տեսնելով աշակերտները զարմանում էին և ասում, „ով է սա, որ ծովն էլ հնագանդւում է սորան“:

Յայրոս Նըրէից իշխանը եկաւ Յիսուսի մօտ և աղաջում էր, որ գնայ և բժշկի նորա միակ տասներկու տարեկան աղջկան՝ որ մերձ ՚ի մահ էր: Յիսուս որ ճանապարհ ընկաւ, գնալու ժամանակը մէկ տեսատես կին, որ տասներկու տարի թողը կայքը բժիշկների վրայ էր ծախս արել և օգուտ չէր ստացել, եկաւ թաքուն Յիսուսի փէշին գիպաւ և իսկոյն բժշկւեցաւ: Յիսուսը հարցրոց թէ ով դիպաւ շըրիս. կինը Յիսուսի ոտերը ընկաւ և ամէնք պատմեց, Յիսուսն էլ սիրտ տալով նորան ժամփու գձեց: Այս ժամանակը Յայրոսի անից՝ մարդիկ եկան այն տեղ և ասացին՝ թէ աղջնկդ մեռաւ, էլ մի աշխատելտար վարդապետին: Յիսուս ասաց Յայրոսին, „Պատմի վախենար, այլ միայն հաւատան“: Երբ որ տուն հասան՝ սուգը և լացը որ տեսաւ, ասաց Յիսուս, „ինչի՞ էք շփոթւել այդ աղջիկը մեռած չէ, այլ քնած է“: Յետոյ Յիսուս վեր առաւ իր հետ երեք աշակերտ և հիւանդի ծնողացը, գնաց աղջկայ ձեռքից բռնեց և ասաց, „Ա եր կաց“: իսկոյն աղջիկը վերկացաւ: Յիսուս հրամայեց նորա ծնողացը հաց տան ուտել:

Երեսուալամբայ անդամալունէն եւ Հարիւրապետի քառայն
Էժւնէլը:

Օատկի տօնին Յիսուս Երուսաղէմ գնաց, այն տեղ
Պրոպատիկէ աւաղանի մօտ շատ հիւանդներ էին մնում, ուր
տարին միանգամ Աստուծոյ հրեշտակը երկնքից վեր էր գա-
լիս, և ջուրը խառնում, և ջուրը խառնելուց ով որ ամէնից
առաջ մէջն էր ընկնում, իսկոյն բժշկում էր:

Արանց մէջ մէկ անդամալոյն կար՝ որ երեսուն ութ
տարի մնացել էր այն տեղ, և հրեշտակը որ ջուրը խառնում
էր՝ ոչ չունէր որ աւաղանի մէջ դձեր, որոյ պատճառաւ
այնքան տարի մնացել էր այն տեղ: Յիսուս ասաց նորան՝ կա
մենում ես որ բժշկես, կամենում եմ, բայց ոչ ոք չունիմ,
որ ջուրը խառնելու ժամանակը՝ ամէնից առաջ ինձ գձինորա
մէջ: Յիսուս ասաց նորան՝ «Ա եր կաց, մահիճդ վեր առ և
զնա՛: Իսկոյն ողջացաւ և վեր առաւ իրա մահիճը և
շրջում էր. և այն օրն էլ շաբաթ էր: Արէայք սկսան
տրանջալ սորա համար՝ և հարցնում էին, ով է նա, որ
բժշկեց քեզ, բայց նա չէր իմանում թէ ով է: Յիսոյ տա-
ճարի մէջ Յիսուս պատահեցաւ և ասաց, «գնա՛, էլ մի
մեղանչեր՝ որ աւելի չար չլինի քեզ»:

Ուեկ անգամ՝ Յիսուս գնաց Կափառնաում, ինչ տեղ որ
հարիւրապետի ծառայն հիւանդ էր մերձ՝ ի մահ. Աարիւրա-
պետը մարդ ուղարկեց և աղաչում էր, որ գնայ իր տուն և
բժշկի ծառային:

Յիսուս գթալով նորա վրայ՝ գնաց, բայց հարիւրապետը
կրկին մարդ ուղարկեց, որ թող չաշխատի չգայ. և երբ
մօտեցաւ նորա տանը՝ հարիւրապետը ինքը առաջ դուս եկաւ
և ասաց, Տէր, չեմ արժանի, որ դու իմ տուն մտնես, այէ
ասաւ խօսքով, որ բժշկւի իմ մանուկը:

Յիսուս դարձաւ դէպ՝ ի ժողովուրդը և աշու, «Ճշմարիտն
եմ ասում ձեզ, որ իսրայէլի մէջ այսչափ հաւատ չ'գտայ.
յետոյ հարիւրապետին ասաց. «գնա՛, ինչպէս որ հաւատացիր՝
այնպէս լինի». և բժշկւեցաւ մանուկը:

Աայն ժամանք ուրան օտար այրի հնող միան որդուն էժւնէլը, հնագ
հաղող հոգի հինգ հացով էլ երիու ձնով չշատցնէլը:

Երբոր Յիսուս աշակերտներով Կային քաղաքն էր
գնում, տեսաւ որ քաղաքի դրան մօտ մէկ այրի կնոջ միակ
որդին մեռել է, և տանում են թաղելու: Յիսուսի գումարը
շարժեցաւ, գնաց գագաղի մօտ և ասաց մեռելին, «որդինակ,
վեր կաց!» իսկոյն մեռելը վեր կացաւ նստաւ և սկսաւ խօսիլ:

Յիսուս գիտէր որ Ներովդէսը պտուում է իրան, գնաց
նաւով Տեթսայիդա, և շատ ժողովուրդ էլ նորա ետեւից
գնացին. նստաւ Յիսուս մէկ անապատ տեղ լերան վրայ՝ քա-
րողում էր և բժշկում հիւանդներին: Երբոր երեկոյ եղաւ,
աշակերտները ասացին Յիսուսին, որ հրաման տայ ժողովր-
դոց, գնան հաց ուտեն: Յիսուս հրամայեց, «դուք տուք գո-
ցա ուտել». աշակերտները ասացին հինգ հաց և երկու,
ձուկն աւելի չունինք, ում կրաւականանայ: Յիսուս հրա-
մայեց որ կարգ կարգ նստացնեն խօսի վրայ, և այն հինգ
հացը և երկու ձուկը օրհնեց Յիսուս, և հրամայեց բաժա-
նել, կերան կշտացան հինգ հազար հոգի, եւ տասներկու
սակառի (քթոց) կտորտանք ժողովեցին: Այս տեսնելով ժո-
ղովուրդը կամեցան իրանց վրայ թագաւոր կարգել:

Յիսուսի ժողովը կրու, նոյնուկո եօնին հացով էլ սիւ ձնով
չորս հաղող հոգի չշատցնէլը:

Այս հրաշքից յետոյ ժողովուրդին արձակեց եւ ինքն
գնաց նստաւ լերան վրայ եւ աշակերտներին պատուիրեց որ

նորանք նաւոց գնան, եւ ինքն էլ ետեւից կ'հասնի նորանց:
Երբոր կէս ճանապարհին հասան՝ օրը մթնացաւ, եւ ծովը
սկսաւ ալեկոծիլ, ահը պատեց նորանց, մէկ էլ յանկած տե-
սան որ ծովի վրայ մէկը գալիս է, սկսան ձայն տալ. Յիսուս
ասաց նորանց „մի վախենաք, ես եմ“։ Գետրոսը ասաց, Տէր,
եթէ դու ես, հրաման տուր, որ ես էլ քեզ մօտ գամ: Յի-
սուս հրաման տւաւ, եւ երբոր նաւից դուս եկաւ եւ գնում
էր՝ սկսաւ ընկղմիլ Գետրոսը, եւ Յիսուսից օգնութիւն
ինդրել. Յիսուս էլ ձեռքից բռնեց եւ ասաց, „թերահաւատ,
իւչի՞ երկմտեցար“: Յետոյ ինքն որ նաւը մտաւ իսկոյն
հանդարատեցաւ ծովը՝ եւ իրանք էլ հասան ցամաքը:

Միւսանգամ անապատումը երեք օր քարոզելուց յետոյ՝
եօթն հացով եւ քիչ ձկնով չորս հազար հոգի կշտացրուց,
եւ եօթն զամբիւլ կտորտանք աւելցաւ:

Տասն էրրորներն եւ՝ ՚ի ջնէ իրերին էժշկւլը:

Երբոր Յիսուս Գալիլեայի եւ Ամարիայի միջից անց
էր կենում, տասն բորոտ հեռուից մկսեցին ձայն տալ. „Յի-
սուս, ողջոմեա մեզ!“: Եւ նա ասաց, „գնացէք եւ ձեր անձը
քահանային ցոյց տւէք“:, եւ նորանք էլ բժշկւած գնացին:
„Նորանցից մէկը, որ Ամասիացի էր, եկաւ Յիսուսից շորհա-
կալ եղաւ. Յիսուս զարմանալով հարցրուց, „ոչ եթէ տասն
էիք. ուր են իննունքը, որ ՚եկան Աստուծուն փառք տալու.՝
Յետոյ ասաց Ամասիացւոյն, ոքո հաւատքը ապրեցրին քեզ,
գնա խաղաղութեամբ“:

Մէկ շաբաթ օր Երրուսաղէմի ճանապարհին մէկ կոյր
մուրացկան (աղքատ) հանդիպեցաւ, աշակերտները հարցին
Յիսուսին, ում մեղ է սորա կուրութիւնը, իրանը՝ թէ իրա
ծնողացը: Յիսուս պատասխան տւաւ, „ոչ իրանը, եւ ոչ իր
ծնողացը“: Յետոյ Յիսուս թքեց գետնին՝ կաւ արաւ եւ ծե-

փեց կուրի աչքերին, եւ հրամայեց որ գնայ լուացւի Աելովմայ
աւազանումը, գնաց այնպէս արաւ, ինչպէս որ հրամայեց, եւ
բժշկւեցաւ կուրի աչքերը: Յիսուս ծանօթները տեսնելով
զարմանում էին, արդեօք նա չէ այն կոյրը: Փարիսեցիքը որ
իմացան շաբաթ օրն է բժշկել, սկսեցին կուրին ասել՝ թէ նա
մեղաւոր մարդ է, կոյրը ասաց, մեղաւոր լինելը չ'իտեմ,
բայց միայն գիտեմ որ կոյր էի, եւ այժմ աթմում եմ, եւ թէ
Աստուծանից չլիներ: Նա չէր կարող ՚ի ծնէ կուրին բժշկել:
Փարիսեցիքն նորա վրայ բարկացան եւ դուս գձեցին: Յետոյ
Յիսուս նորան պատահեցաւ եւ իրա Որդի Աստուծոյ լինելը
յայտնեց նորան. եւ նա երկրպագութիւն տւաւ Յիսուսին:

Դ աղարոսի յարութեանը:

Երբոր Դ աղարոսը շատ հիւանդացաւ, նորա քոյրերը
Յիսուսին իմաց տուին: Յիսուս երկու օր էլ ուշացաւ, յետոյ
ասաց իրա աշակերտներին „գնանք Շրէաստան, մեր բարե-
կամ Դ աղարոսը ննջել է եւ զարթացնենք նորան“: Իսյց նո-
րանք չհասկացան Յիսուսի ասածը եւ սկսան զարմանալ. յետոյ
Յիսուս յայտնի ասաց նորանց, Դ աղարոսը մեռաւ, եւ ես
ուրախ եմ, որ սորանով աւելի կհասատուի ձեր հաւատքը:

Եւ երբոր Դ աղարոսի հասաւ Դ աղարոսը չորս օրւայ
մեռած էր եւ լմազած: Դ աղարոսի քոյրը Մարթան որ
լսեց Յիսուսի գալը, գնաց առաջ եւ ասաց, Տէր, եթէ այստեղ
էիր հանդիպել, իմ եղբայրը մեռած չէր լինի. բայց հաւատում
եմ որ կիմա էլ թէ ուզես, կարող ես ողջացնել: Յիսուս
պատասխան տւաւ, յարութիւն կառնի քո եղբայրը^a: Մարթան
իմաց տւաւ. Մարիամին Յիսուսի գալը, Մարիամը իսկոյն եկաւ.
Յիսուսի մօտ, նմանապէս եւ սկաւորները նորա հետ, կարծե-
լով թէ գերեզմանն է գնում լաց լինելու: Մարիամը Յի-
սուսին որ տեսաւ մի եւ նոյն բանն ասաց, եւ մի եւ նոյն

պատասխանը լսեց, ինչ որ իրա քսյր Անարթան: Յիսուսի սիրով լբցւաւ և արտասուելով ասաց, „մոր գրիք Դաղարոսին՝ տարան ցոյց տւին գերեզմանը: Յիսուս հրամայեց վեր առնել գերեզմանի քարը, եւ բարձր ձայնով ասաց, „Դաղարէ, արի, եկ արտաքս!“: Անոեալը իսկոյն պատանքով վեր կացաւ կանգնեցաւ եւ Յիսուս հրամայեց՝ որ պատանքը եղանեն, այս տեսնելով շատերը հաւատացին Յիսուսին: Մէկ քանիսն էլ գնացին պատմեցին Փարիսեցւոց, նորանք էլ քահանայապետների հետ խորհուրդ արին, որ Յիսուսին սպանեն: Յիսուս այս բանը լսելով գնաց Խփրայիմ գեղը:

Յիսուսի առակիալուսուննիւնելը:

Աւրանացանի առակի:

Երբոր մէկ սերմնացան (Երկրագործ) ասաց, սերմն էր ցանում: սերմերից որը ընկաւ ճանապարհին՝ ունակոխ եղաւ, և թռչունները կերան: որը ապառաժ (քարոտ) տեղ ընկաւ՝ արմատ չըռնեց՝ չըրացաւ: որը փշոց մէջ ընկաւ՝ խեղդւեցաւ: և որը փափուկ հողի մէջ ընկաւ՝ պտուղ տւաւ մէկի տեղ Երեսուն, վաթսուն և հարիւր:

Յետոյ մեկնեց Յիսուս այս առակը այսպէս. „սերմերն ասաց, Աստուծոյ բաներն են, ցանած հողը կամ գետինը մարդուս սիրտն է, անհաւատ, թերահաւատ, աշխարհասէր և փառասէր մարդոյ սիրտը Աստուծոյ բաները չ'են կարող պինդ պահէլ և բարեգործութիւն գործել բայց բարի և ջերմեռանդ սիրտ ունեցողը՝ ուրախութեամբ լսելով Աստուծոյ պատուիրանքները, առատ առատ բարեգործութեան պտուղներ են տալիս համբերութեամբ:“ (Ղուկ, ը. 4,—8):

Առմարդացան առակի:

Մէկ մարդ Յիսուսալէմից գնում էր Երեքով. Ճանապարհին ընկաւ աւազակաց ձեռքը, աւազակները վիրաւորեցին նորան և կիսամեռ թողին ճանապարհին: Այն տեղից անց կացաւ մէկ քահանայ և զանց արաւ, յետոյ եկաւ մէկ զետացի՝ նա էլ զանց արաւ, սորանցից յետոյ եկաւ մէկ Սամարացի և խնամք տարաւ վիրաւորւած մարդուն, կապեց վէրքերը, (կտրտած տեղերքը) դրաւ ձիու վրայ, և տարաւ հասցրուց մէկ պանդոկ, պանդոկապետին երկու դահիկան տւաւ, որ հոգս տանի նորա համար, և ասաց, եթէ աւելի ծախս անես կը ինին յետ գալուցս կհատուցանեմ: (Ղուկ. ժ. 24—35):

Այս առակը պատմելով Յիսուս կամեցաւ հասկացնել, թէ մարդ պարտական է մարդասէր լինել և ցաւակցարար օգնել ընկերին: և ոչ այն անդում քահանայի կամ ղետացոյ պէս՝ չցաւակցել: Եւ թէ ով որ կարող է բարի առնել ընկերին և չ'անի՝ պարտաւոր կմնայ Աստուծոյ և մարդոյ առաջ:

Հարիւր ոչխարդաց առակի:

Դուք ինչպէս էք կարծում, ասաց Յիսուս իր աշակերտացը, եթէ մէկ մարդ հարիւր ոչխար ունենայ, և այն ոչխարներից մէկը կորչի, չէ որ իննսուն ու իննը կմողնի անապատումը և կ'երթայ կպտուի մէկ հատ կորածը. և երբ կդանի, յայտնի է որ առաւել ուրախ կլինի այն մէկի վրայ՝ քան թէ իննը սուն ու իննի վրայ: (Աստ. ժը. 12—13): „Ամանապէս և կորուեալ գրամին: Առակի միտքը այս է թէ Յիսուս աշխարհը եկաւ մոլորեալ և կորած մարդոյ դարձնելու համար. և թէ չ'օր Աստուծոյ կամքն այն է, որ մարդկերանցից մէկն էլ չկորչի:“

Աշտառական որդուոյ աստվածական:

Ո՞էկ մարդ ասաց, երկու որդի ուներ, փոքր որդին առաւ հօրից իր ժառանգութեան բաժինը, և գնաց հեռի աշխարհ, և այնտեղ անառակ կեանք վարելով՝ վատնեց (փշացրուց) բոլոր ունեցածը, այնպէս որ վերջը մէկ մարդու մօտ խողարած դարձաւ, և այնպէս ողորմելի վիճակի մէջ ընկաւ՝ որ մինչեւ անդամ խողերի կերակրին էլ կարօտ էր մնացել: Ա երջը մտածեց՝ թէ հօրս տանը քանի վարձկաններ կան. կ'երթամ, կ'աղաչեմ որ ինձ էլ ընդունի իբրև մէկը վարձկաններից: Երբոր տեսաւ հայրը, որդուն դէմ եկաւ, և փաթթւեցաւ վզեց: Որդին ամաչելով մեղայ ասաց, էլ չեմ արժանի քո որդի կոչիլ, այլ համարիր ինձ քո վարձկաններից մէկը: Աօր գութը շարժեցաւ, ազնիւ շորեր հրամայեց հագցնել, պարարակ (չաղ) եղը մորթել տւաւ, և մեծ ուրախութիւն արաւ կորած որդին գտնելու համար: Վայն ժամանակը մեծ որդին, որ ագարակում էր, եկաւ տեսաւ ուրախութեան հանդէսը, և սկսաւ տրտնջալ հօր վրայ, և ասաց, „այսքան ժամանակ է քեզ հնաղանդութեամբ ծառայում եմ, ինձ մէկ ուշ էլ չտւիր, որ ես էլ իմ բարեկամաց հետ մէկ օր ուրախութիւն էի արել. բայց այդ որդիեր, որ քու ստացածքը անառակութեամբ վատնեց՝ պարարտ եղը մորթել տւիր“: Այսքան պատասխան տւաւ ո՞րդեակ, գու ամէն ժամանակ իմ մօտ ես, և որ ինչ իմն է՝ քո է, բայց սա մեռած էր և կենդանացաւ կորած էր և գտնեցաւ. վասն որոյ և պէտք է ուրախանալ“: (Պատկ' ժե. 11—30): Կամի ասել՝ թէ Վասուած չէ կամենում մեղաւորի մահը, այլ նորա դառնալը և ապրելը:

Տառեւի աստվածական:

Ո՞էկ մեծատուն ուներ անտեսա, որպէս անշաւատարմութիւնը լսելով՝ կամեցաւ հանել նորան անտեսութեան պաշտօ-

նից: Տնտեսը այս որ լսեց՝ շուտով կանչեց մեծատան պարտատերերին, և ասաց, քանի ինչ պարտիք իմ տիրոջն. մէկն ասաց՝ հարիւր քոռ ցորենոյ, գրիր շուտով ութուուն. միւսին ասաց, գու թնչքան ես պարտ. ութուուն լիտր ձէթ, գրիր շուտով վաթուուն. և այսպէս պակսեցրուց մէկ մէկ մասը: Տէրը երբոր լսեց՝ շատ գովեց անիրատութեան տնտեսին: (Պատկ. ժե. 1—8): Վայս առակով սովորեցնում է՝ թէ մնաք էլ փողով և կամ ողորմութիւնով պէտք է աղքատներին շահենք. և թէ չէ կարելի Վասուածուն ծառայել և մամնային:

Ո՞էժապան էւ Պատկարուի աստվածական:

Ո՞էկ մեծատուն ազնիւ շորերով զարդարած՝ ամէն օր առատ առատ ուտում խմում էր և ուրախութեան մէջ էր: Վարա գրան մօտ էլ ընկած էր մէկ աղքատ, անունը Պաղարոս. այնշափ ողորմելի, որ նորա սեղանի փշոնքին էլ կարօտ էր. և շները գալիս լիզում էին նորա վերքերը: Վեռան երկուսն էլ, մեծատունը գնաց դժոխքը, Պաղարոսը գնաց Վարահամու գովը. մեծատունը երբ բարձրացրուց աշքերը, տեսաւ Պաղարոսին Վարահամու գոգումը նստած արքայութեան մէջ. և սկսաւ աղղանդել. „հայր Վարահամ, ողորմիր ինձ, ուղարկիր Պաղարոսին“ որ իր մատի ծայրը ջրով թաց անի և իմ պապակեալ (այրած) լեզուն հովացնի“: Պատասխան տւաւ Վարահամը, „մտքիդ բեր քու կենաց վայել շութիւններդ և Պաղարոսի շարչարանքը“: Լին աղղանդեց մեծատունը, „աղաւում եմ քեզ, հայր, գոնէ ուղարկիր գորան իմ հօր տուն, որ իմ եղբարց իմաց տայ, չլինի թէ նոքա էլ այս տանջանաց տեղը գան“: Պատասխան տւաւ Վարահամը „ունին նորանք Վավսիսի և միւս մարգարեից գրեանքը, թող կարգան և համանան“: Ոչ ասաց, մեծատունը, մինչեւ մեռելներից մէկը չգնայ և չքարողի նորանց, նոքա չեն որ

Հաւատայ: Վարահամը ասաց, եթէ նոքա մարդարէից գրածներին չեն լիի, յայտնի է որ եթէ մեռելներից էլ մէկը գնայ՝ նորան էլ չեն լիի: Յիսուս այս առակով սովորացրուց՝ թէ մարդս իր յոյսը բոլորովին այս աշխարհքիս մարմնաւոր ապրուստի կամ վայելչութեանց և փառաց վրայ չպէտք է դնի, պատճառ որ այս աշխարհքիս մեծութիւնը և փառքը սուտ է և անցաւոր: Յովհաննէ, ժամանակ, 1:

Դաստիարկի առաջը:

Մէկ քաղաքումը մէկ դատաւոր կար, որ ոչ Աստուծուց երկիւղ ունէր, և ոչ մարդուց ամօթ: Մէկ այրի կին ամէն օր գալիս էր նորա մօտ և աղաչում էր որ նորա դատաստանը կտրի: Դատաւորը երկար միջոց չէր լսում նորան, բայց կինը այնքան գնաց եկաւ և աղաչեց՝ որ դատաւորը ձանձրանալով ինքն իրան ասաց իր մտքումը, ոթէպէտ Աստուծուց երկիւղ չունիմ, և ոչ մարդուց ամօթ, գոնէ ինձ այսքան ձանձրացնելու և այսչափ թախանձանաց համար՝ կտրեմ սորա դատաստանը, որ սորա ձեռքից աղատւեմ (Ղուկ. ժը. 1—5): Վայս առակը ասելով սովորացրուց՝ թէ հարկաւոր է մեղ ամէն ժամանակ աղօթք անել որ Աստուծ մեր անդար աղաչանացը լսելով՝ ողորմի մեղ:

Փարիսից իւ Մատիարկի առաջը:

Փարիսեցին և մաքսաւորը մտան տաճարը: Փարիսեցին սկսաւ աղօթք անել այսպէս ։ Աստուծ իմ, շնորհակալ եմ քեզանից, որ չեմ անիրաւ և յափշտակող միւս մարդոց կամ այս մաքսաւորի պէս, այլ պահում եմ երկու անդամ շաբաթը, և իմ ընչեցս տալիս եմ աղքատաց տասանորդը: Բայց մաքսաւորը իրա մեղքը զգալով՝ գլուխը կորացրած, կուրծքը ծեծելով ասում էր. ։ Աստուծ, քաւեա զիս զմեղաւորս:

Մեղաւորը արդարացտծ դուս եկաւ տաճարից, բայց արդարը իրա ամբարտաւանութիւնով մեղաւոր համարեցաւ առաջի Աստուծոյ: (Ղուկ. ժը. 9—14):

Վայսպէս էլ ամէն մեղաւոր, եթէ նոնարհ սրտիւ մեղայ գայ, և Աստուծուց թողութիւն ննդրի, Վասուած կների նորան. իսկ արդարը՝ եթէ ամբարտաւանութեամբ պարծենայ, կդատապարտւի:

Քանիչարաշահ ժամանակից իւ անհարդադիւց ժամանակի առաջը:

Մէկ աղնուական, երբ որ հեռու երկիր պիտի գնար, կանչեց իրա ծառայից և ամէն մէկին ջոկ ջոկ փող բաժանեց: Մէկին տւաւ հինգ քանքար, միւսին՝ երկու, և երրորդին էլ մէկ. և հրամայեց որ շահեցնեն մինչև իրա վերադառնալը: Երբոր վերադառնաւ՝ կանչեց ծառայից և կամեցաւ իմանալ, թէ ով որքան է շահեցրել: Հինգ քանքար ստացողը՝ հինգ էլ շահ բերաւ, երկու ստացողը՝ երկու էլի շահ. և երկուսին էլ գովեց, և կարգեց մէկին հինգ քաղաքի վրայ իշխան, և միւսին՝ երկու քաղաքի վրայ: Իսկ երրորդը՝ որ մէկ քանքար էր ստացել, յետ բերաւ քանքարը՝ և ասաց, ։ Տէր, գիտէի որ գու խիստ մարդ ես, տարայ թաղեցի քու տւած փողը գետնի տակ որ չկորցնեմ, և այժմ բերի. առ քու տւածդ քեզ: Երբ տէրը լսեց այս բանը՝ բարկացաւ. ։ ծառայ չար և վատ ասաց, եթէ գիտէիր որ խիստ մարդ եմ, ինչի համար իմ տւած քանքարը սեղանաւորաց (զառափներին) չտուիր, որ ես այժմ տոկոսեօք (շահով) պահանջէի: Վայս ասաց և գուս գձել տւաւ նորան, և փողը վեր առաւ նորա ձեռքից՝ տւաւ նորան, որ ունէր տասն քանքար: (Աստ. իւ. 14—28): Վայս առակը ասելով՝ իմաց տւաւ Յիսուս, թէ Աստուծ արդար դատող է, և կամնում է, որ ամէն

մարդ իր ստացած շնորհքը աշխատասիրութեամբ աճեցնի. և
չաձեցնողը քանքարաթագուցի պէս արժանի կլինի պատժի:

Ուստիուրի որդուոյ հարսանիւաց առանձ:

Ո՞ւկ թագաւոր իր որդուն հարսանիք արաւ, և ուզար-
կեց ծառաներին՝ որ իր բարեկամներին հրաւիրեն, բայց բա-
րեկամները ամէն մէկը մէկ մէկ պատճառ տալով՝ չգնացին,
ոմանք էլ ծառաներին բռնեցին ու սպանեցին: Այս լսելով
թագաւորը զինուորներ ուղարկեց՝ կոտորել տւաւ ամէնին,
և նորանց քաղաքը այրեց: Յետոյ փողոցներից անց ու դարձ
անողներին ներս կանչել տւաւ, սորանցից մէկին տեսաւ, որ
հարսանեաց շոր չ'ունէր հագին՝ ընկեր, ասաց նորան, եթէ
հարսանեաց շոր չ'ունէիր՝ ինչի՞ մտար այս տեղ: Նա պա-
պանձեցաւ և չկարաց պատասխան տալ: Ա ասն որոյ հրա-
մայեց թագաւորը՝ որ նորա ձեռքերը և ոտերը կապեն և
դուս գձեն (Ուստ. իր. 2—13):

Այս առաջը ասելով՝ Յիսուս հասկացրուց, թէ Նրէայք
իրան անարգելով՝ պատժի արժանի են. և թէ Աստուծոյ
արքայութեան մէջ, միայն բարեգործութեամբ զարդարւած
հոգին կարող է տեղ ունենալ:

Տասն հուսանաց առանձ:

Տասն կուսանք կային՝ հինգը յիմար, և հինգն իմաստուն:
Վորանք վառած լապտերները ձեռքերին բռնած՝ փեսայի և
հարսի առաջ դուս եկան: Իմաստունները ուրիշ ամանով էլ
ձէթ ունէին վեր առած իրանց հետ, բայց յիմարները ոչ:
Փեսայի գալն ուշացաւ, և ամէնքը քուն մտան (քնեցին). Կէս
գիշերին յանկարծ ձայն եկաւ՝ արէք (վէր կացէք), ահա
փեսայի գալիսէ: Ա եր կացան ամէնքը, պատրաստեցին իրանց
լապտերները (ֆանար): Բայց յիմարները անպատրաստ լի-

նելով՝ լապտերները հանգչում էին: Իմաստուններից իւղ ու-
զեցին, բայց նոքա չտուին ասելով՝ „Գուշէ՛ մեղ էլ բաւական
չլինի, գնացէք գնեցէք (առէք) վաճառողներից“: Գնացին
յիմարները, փեսայն եկաւ և իմաստունները որովհետև պատ-
րաստ էին՝ մտան փեսայի հետ հարսանիքը, և փակւցաւ
գուռը: Յետոյ եկան յիմարները, և սկսան դրսից աղաչել
փեսային, որ գուռը բաց անի. բայց նա չբաց արաւ՝ ասելով
„ոչ գիտեմ զձեղ“: (Ուստ. իր. 1—12): Յիսուս այս առաջը
ասելով յայտնեց՝ թէ մենք պէտք է մեր հոգւոյ փրկութեան
համար միշտ հոգանք, և օրէ ցօր չգձենք, և միշտ արթուն
և պատրաստ լինինք իմաստուն կուսանաց պէս, որ անմահ
փեսայի առագաստից (Քրիստոսի արքայութիւնից) չլոկւնք:

Յիսուսի լշնամիչը:

Տէրն մեր Յիսուս զարմանալի էլ թուռմ ամէնին, եւ
շատ ժողովուրդ էր գնում նորա հետ մինչեւ անապատ տե-
ղերք էլ, եւ չէ թէ միայն Նրէայք, այլ եւ հեթանոսք էլ
փափագում էին տեսնել եւ լսել նորա քարոզութիւնը: Դապիր-
ները եւ փարիսեցիք նորա վրայ նախանձում էին, պատճառ
որ համարձակ յանդիմանում էր նորանց վատութիւնը: Դապիր-
ները՝ հրէից վարդապետներ կամ կարդացողներն էին: Յի-
սուս նորանց ագիտութիւնը եւ թերահաւատութիւնը յայտ-
նում էր միշտ: Փարիսեցիք գրսից ցոյց էին տալիս՝ թէ իրանք
լաւ օրէնք պահող են, բանթէ ուրիշը, բայց մէծ մասը կեղծա-
ւորներ էին, հպարտ, աղահ, դրսից չերմեռանդ ձեւացնելով
խարում էին ժողովրդին: Յիսուսը ատելի եղաւ քահանայա-
պետներին եւ նորանց իշխաններին, պատճառ որ Յիսուս
ասում էր, թէ Երրուսաղէմ քաղաքը եւ տաճարը պիտի կոր-
ծանի: Ա երջապէս մարմնասէք Նրէայք չ'էին կարողանում

հաւատութեալ՝ թէ նա ինքն է Այեսիայն. տեսնելով որ Յիսուս
այնչափ աղքատ է, խոնարհ եւ հեղ: Ատում էին նորա վար-
դապետութիւնը, որ քարոզում էր արհամարհել հարստու-
թիւնը, հեշտութիւնը եւ աշխարհքիս ամէն բարիքը, եւ ա-
սում էր՝ թէ ով որ ուզում է իրան հետեւել, պիտի վեր
առնի խաչը, եւ յետ կենայ ամէն բանից, եւ իր անձն էլ
ուրանայ:

Հյաստուի թշնամիքը նախատում էին եւ ուզում էին
քարկոծել նորան. եւ վերջապէս իրանց մէջ խօսք կապեցին
որ սպանեն: Որբանք խելքից հանեցին Յիսուսի աշակերտնե-
րից մէկին՝ անունը Յուդայ Իսկարիուտացի, որ խոստացաւ
մատնել Յիսուսին նորանց ձեռքը երեսուն արծաթով,

Յիսուսի չարչարտահք:

Ճրէից պասէքին, այսինքն զատկի տօնին, Յիսուսի
թշնամիքը խօսք կապեցին իրարու մէջ, որ նորան բռնեն եւ
սպանեն: Ճինդշարթի երեկոյին Յիսուս աշակերտաց հետ
ընթրիքը կերաւ, եւ երբոր ուտում էին, վեր առաւ Յիսուս հա-
ցը, օրհնեց, կտրտեց եւ բաժնեց նորանց ասելով՝ Առէք կերէք,
այս է իմ մարմինը, որ ձեղ համար պիտի բաշխեի: Յետոյ
առաւ գինին բաժակով, օրհնեց եւ տւաւ նորանց ասելով՝ Առ-
րէք (խմեցէք) ամէնքդ սորանից, այս է իմ արիւնը նոր
ուխտի (խոստունքիս), որ պէտք է թափի ձեղ համար, այս
արէք ինձ յիշատակելու համար, և սորանով հաստատեց ոււրբ
հաղորդութեան խորհուրդը: Կոյնպէս և խոնարհութեան մէկ
մէծ օրինակ տալով՝ աշակերտաց ոտները լուաց: Յետոյ Յի-
սուս գնաց ձիթենեաց լեառը պարտէղի մէջ, ուր որ շատ
անգամ գնում էր եւ աղօթք էր անում: Այն տեղ աղաչեց
իր հօրը, որ շարչարանքից աղատի իրան. բայց ասում էր,
ոչ թէ ինչպէս իմ կամքս է, այլ քու կամքդ լինի: Այն

ժամանակը Յուդայ մատնիչը բերաւ իր հետ Պիղատոսի
զինուորներին, բռնեցին Յիսուսին եւ տարան Կայիափայ
քանուորների տուն, եւ այն տեղ սուտ վկայութիւնով
դատապարտեցին Յիսուսին, եւ վճռեցին որ մեռնի: Իոլոր
աշակերտները թողին Յիսուսին եւ փախան. եւ Պետրոսն էլ
ուրացաւ երեք անգամ, ինչպէս Յիսուս առաջուց ասել էր:
Կայիափայի տնից տարան Պիղատոս Պօնտացւոյ մօտ,
որ Ճողմայեցւոց իշխանութեան տակ կառավարում էր
Ճրէաստանը. սա շատ հետեւեցաւ Յիսուսին աղատել, տեսնելով
նորա անմեղութիւնը: Վերջը ծեծել տւաւ, եւ զինուորները
փուշէ պսակ դրին նորա գլխին, ծաղը անելու համար Յի-
սուսի ասածը, թէ թագաւոր եմ Ճրէից:

Յիսուսի ճակալ:

Վերջապէս Պիղատոսը դատապարտեց Յիսուսին որ մեռնի,
և խաչը ուսի վրայ գնել տալով՝ ուղարկեց Գողգոթա ասա-
ցեալ լեառը, այն տեղ խաչեցաւ Յիսուս երկու աւագակաց
մէջ: Խաչը չարչարանքների մէջ այն վատահամբաւ պատիժն
էր, որ այն ժամանակը աւազակներին և մեծամեծ մեղք ունե-
էր, որ այն ժամանակը արբանակը աւազակներին էին պատժում: Յիսուս մնաց խաչի վրայ
այնքան ժամանակ, մինչեւ որ ամէն մարգարէութիւնները կա-
տարեցան:

Կորա մահուան ժամանակը արեգակը խաւարեցաւ, երկիրը
շարժեցաւ, գերեզմանները բացւեցան, և մեռելները յարու-
թիւն առան: Օրը ուրբաթ էր և զատիկ, այն օրը՝ որ զոհ
էին մատուցանում գառը՝ օրինակ էր Յիսուսի: Կորա մահը
ձշմարիտ պատարագ եղաւ, պատճառ որ միւս հին օրէնքի
մատաղները միայն օրինակ էին այս ձշմարիտ պատարագին:
Յիսուս այսպէս մեռնելով՝ կատարելապէս վճարեց Աստուծոյ

արդարութիւնը ամէն մարդու մեղաց համար: Անմեղն Յիսուս վճարեց մեղաւորաց տեղ, իր արիւնով ազատեց սատանայի գերութիւնից, և իր մահուամբը յաւիտենական կենաց ձանապարհը բաց արաւ:

Ուստանի Յարութիւնը Եւ Հայոց բաց:

Յովսէփ և Կիկոդեմոս իշխանը Յիսուսի մարմինը օծեցին նորա մեռնելուց յետոյ՝ և դրին նոր գերեզմանի մէջ. նորա թշնամիքը պահապաններ դրին նորա գերեզմանի վրայ, պատճառ որ գիտէին՝ թէ Յիսուս ասել է, որ յարութիւն պիտի առնեմ: Իսայց երբորդ օրը՝ որ կիւրակէ էր, Յիսուս փառաւորապէս յարութիւն առաւ իր գերեզմանից, և պահապանները մեռելի պէս լնկած մնացին:

Առաքեալք առաջ չկարացին հաւատալ՝ թէ Յիսուս յարութիւն է առել, մինչեւ որ աչքով տեսան, և հետը կերակուր կերան: Յիսուս քառասուն օրուայ մէջ շատ անդամ երեցաւ նորանց, և սովորացրեց՝ թէ ի՞նչ պէտք է անեն. և հրամայեց որ գնան քարոզեն աւետարանը ամէն աղքաց, և մլրտեն յԱնուն Հօր և Որդույ և Հոգուոյն սրբոյ: Իշխանութիւն տւաւ որ արձակեն մեղքերից, և խոստացաւ նորանց հետ մինչեւ մինչեւ աշխարհիս վերջը:

Քառասներորդ օրը վեր առաւ Յիսուս իր աշակերտացը և տարաւ Բնեթանիա ձիթենեաց լեառը. ուր օրհնեց նորանց, և խոստացաւ միսիթարիչ սուրբը Հոգեւոր Հոգեւոր է: Են ամենալու հասկացան որ ամէն մարդ մեղմուոր է և կարօտ Աստուծոյ շնորհաց, և չեն կարող ընդունել այդ շնորհը, մինչեւ որ չհաւատան Քրիստոսին, և թէ Կորա թագաւորութիւնը Հոգեւոր է: Են ժամանակը վառեցան Աստուծային սիրով, որով քաղցրացաւ նորանց համար Աստուծոյ պատւիրանքներ պահելը, և մէկ անյաղթելի զօրութիւն ստացան Ճշմարտութեան վկայ լինելու:

Հոգեւոր աշխարհի կառաւումը:

Օտակից յետոյ յիսներորդ օրը Հոգեւոր մէծ տօն էին

զատարում, անունը Պենտեկոստէ, օրէնքների յիշատակ, որ օրը որ Աստուծած տւել էր նորանց Ամա լերան վրայ: Եւ այն օրն էլ որ Յիսուսի Յարութեան յիսներորդ օրն էր, երբ բոլոր աշակերտք միասին ժողոված էին, յանկարծ երկնքից քամու պէս մէկ ձայն եկաւ և տան մէջ լքցւեցաւ, և կրակի լեզուք երեցան ամենքի վրայ: Են ժամանակը ամենքը լքցւան Հոգուվ սրբով, և սկսան զանազան լեզուներ խօսիլ այս նշանակում էր՝ թէ նորանք աւետարանը պիտի քարոզեն ամենայն ազգաց:

Հոգեւոր շատ զարմացան, և սուրբն Պետրոս սկսաւ հասկացնել նորանց այս հրաշքի պատճառը. մեկնելով մարդարկութիւնները, և սատց՝ որ Յիսուս խաչելուց յետոյ յարութիւն առաւ, և հիմա ուղարկեց Հոգեւոր սուրբ, ինչպէս որ խոստացել էր, և թէ ինքն Քրիստոս Աստուծած է՝ իրանք էլ չեն կարող փրկւիլ, մինչեւ որ Կորան չհաւատան և չապաշխարեն: Պետրոսի այս խօսքերովը երեք հազար հոգի հաւատացին, և մկրտւեցան:

Առաքեալք և նորանք, որոնց վրայ Հոգեւոր սուրբ վեր եկաւ, բոլորովին փոխւեցան, միտքերը լուսաւորւեցան սուրբ գիրքը իմանալու, հասկացան որ ամէն մարդ մեղմուոր է և կարօտ Աստուծոյ շնորհաց, և չեն կարող ընդունել այդ շնորհը, մինչեւ որ չհաւատան Քրիստոսին, և թէ Կորա թագաւորութիւնը Հոգեւոր է: Են ժամանակը վառեցան Աստուծային սիրով, որով քաղցրացաւ նորանց համար Աստուծոյ պատւիրանքներ պահելը, և մէկ անյաղթելի զօրութիւն ստացան Ճշմարտութեան վկայ լինելու:

Հոգեւոր նույնական վկայ:

Համար Հոգեւոր ընդունեցին քրիստոնէական հաւատալ,

բայց աւելի շատերն էլ չընդունեցին առաքելոց վարդապետութիւնը, և անդթութեամբհալածեցին նորանց: Առւրբ Ասեփանոսին՝ քարկործեցին՝ որ եօթը սարկաւագաց մէկն էր, որոնց առաքեալք կարգել էին եկեղեցւոյ սպասաւոր: Այս առաջին մարտիրոսը եղաւ, այսինքն՝ Յիսուսի վկայակութեան համար մեռնող: Այն ժամանակը հերձուածող Այամարացիք ընդունեցին՝ Քրիստոնէական հաւատը, և մլրտւեցան: Առաքեալք էլ ձեռքը դնում էին նորանց վրայ՝ որ հոգին սուրբ ընդունեն. և այն գրոշմը տալու նշան էր: Հեթանոսներն էլ փոքր առ փոքր սկսան մտնել սուրբ եկեղեցւոյ մէջ: Առաջինը եղաւ հոռվմայեցի Կուռնէլիոս հարիւրապետը, որ առաջուց էլ Աստուած էր ճանաչում, և միշտ աղօթք էր անում, և շատ ողորմութիւն էր տալիս:

Աստուած հրեշտակ ուղարկեց նորա մօտ, որ Պետրոս առաքեալին գտնի, նոյնպէս և Աստուած ինքն տեսիլքով յայտնել էր Պետրոսին, որ առանց խորութեան գնայ նորա տուն: Երբ որ նա եկաւ սկսաւ խօսիլ, այն ժամանակը Կուռնէլիոս և ամէնքը, որոնք նորա տանը ժողոված էին՝ Հոգով սրբով լրցւեցան, և շնորհք առին լեզուներ խօսելու: Առւրբ Պետրոսն էլ շուտով մլրտեց ամէնին: Այն ժամանակը յայտնի եղաւ հեթանոսաց կոչման խորհուրդը, որոնց Աստուած իր բարութեամբը հաւասար Հրէից հետ՝ հրաւիրում է դէպ 'ի հաւատը և Յիսուսի Քրիստոսի շնորհքը. և հեթանոսները՝ Աստուածոյ երեսից ընկած Հրէից տեղը բռնեցին:

Յիսուս երկինքը համբառնալուց յետոյ՝ իրան աշակերտ ընտրեց Պօղոսին, որ հեթանոսաց քարողիչ լինի, և նորանով տասն երեք եղան առաքեալք:

Առաջ էլ շնորհաց հաստատութիւննու:

Առաքեալք դնացին բոլոր աշխարհք, որ ամէն աղգին

սովորացնեն Ճշմարիտ հաւատը, ինչպէս որ Տէրն մեր Յիսուս Քրիստոս հրամայել էր նորանց: Եռքա ամէն տեղ եկեղեցի հաստատելով՝ կարգում էին եպիսկոպոսներ, քահանայք և սարկաւագներ, որ հոգուեն հաւատացեալ ժողովուրդը: Քրիստոսի Եկեղեցին հաստատեցաւ առաջ Երուսաղէմ, յետոյ Այամարիա, Անտիոք և ուրիշ շատ քաղաքներումը:

Հայոց Եէւղեցւոյ հաստատութիւննու:

Քրիստոսի 32 թւից մինչև 430:

Հայոց եկեղեցին հիմնեցաւ Քրիստոսի առաջին դարում՝ նորա երեք աշակերտաց ձեռքովը, առաջինը՝ Ծաղկոս, որ Քրիստոսի հրամանաւ նորա համբառնալուց յետոյ՝ եկաւ փոքր Հայաստան Եղեսիա քաղաքը մեր Հայոց Արգար թագաւորի մօտ, և քրիստոնէական հաւատով լուսաւորեց թագաւորին և բոլոր ժողովրդոց, քարողից մէծ և փոքր հայաստանումը՝ և հոգուեց Հայոց եկեղեցին, 18 տարի (32—49): Երկրորդ՝ Տարթուղիմէոս, որ նմանապէս եկաւ Հայաստան և 4 տարի քարողելով՝ աւելի հաստատեց Հայոց եկեղեցին Քրիստոնէական հաւատոյ մէջ: Երրորդ՝ Յուղայ Յակոբեան՝ կաթուղիկեաց թղթոց գրողը, որ սովորացնելով Հայոց տանի զանազան քաղաքներումը, յետոյ նահասակեցաւ Հայոց Որմի քաղաքումը: Աներ եկեղեցին այս առաքելոց ձեռքով՝ հիմնելով՝ աւելի ևս տարածեցին և պայծառացրին սորանց աշակերտները. զոր օրինակ, Վագէ եպիսկոպոսը Եղեսիա քաղաքում, Զաքարիա եպիսկոպոսը Վաւարշայում. Եղիշէ առաքեալք Դաշտ գաւառում. Եւստաթէոս առաքեալը Ախոնեաց նահանգում. Կումանի և Բարելաս եպիսկոպոսները

Գաղթան գաւառում, և ուրիշ շատերը, որոնց մէկ մէկու ետևից յաջորդեցին և ուրիշ եպիսկոպոսներ և առաջնորդներ Հայաստանի զանազան կողմերումը երկրորդ և երրորդ գարերում։ յետոյ չորրորդ գարու սկիզբին՝ սուրբ Գրիգոր Անակայ որդին, Պարթև մէր թագաւոր Տրդատին՝ և նորա հետ ժողովրոց, և բոլոր ազգը և Հայոց թագաւորութիւնը դարձրուց դէպ՚ի քրիստոնէական ճշմարիտ հաւատը, առաջնորդ և եկեղեցւոյ գլուխ կարգւեցաւ և կառավարեց 30 տարի (302—332): «Արան յաջորդեցին անթիւ հովիւներ ամէն դարերումը։ Կրիստոնէու լուսաւորչի փոքր որդին, իր հօրից եպիսկոպոս ձեռնադրեցաւ, և ուղարկւեցաւ «Աիկոյ առաջին ժողովը՝ 325 թւին, և բերաւ այն ժողովոյ սահմանները և կանոնները. և նստաւ կաթողիկոս իբր 8 տարի, (332—339): Պարթոր լուսաւորչի մեծ որդին Արթանէսը, 16 տարի կաթողիկոսութիւն արաւ, (339—396), Երուսաղէմայ Առակար եպիսկոպոսից առաւ կարգերը, և սուրբ Խորհուրդոց կանոնները, ծէսերը և եկեղեցւոյ տօները, որով և զարդարեց Հայոց եկեղեցին։

Սուրբն՝ Աերսէս՝ լուսաւորչի թոռան թոռը, կաթողիկոս նստաւ 20 տարի (363—384). Կոստանդնուպօլսոյ ժողովումը գտնւեցաւ, և նորա կանոններով պայծառացրուց մէր ազգը։ Սուրբն Աաշակ՝ Աերսէսի որդին, կաթողիկոս նստաւ 51 տարի (390—440), իր աշակերտաց ձեռքով ստացաւ Եփիսոսի ժողովոյ վճիռները և կանոնները 431 թւին, և մուծեց Հայոց եկեղեցւոյ մեջ, սորան գործակից և օգնական էր սուրբն Աերսովակ, որ Կատուծոյ օգնութեամբը գտաւ կամ հնարեց Հայոց լեզուի յատուկ գրերը 406 թւին, և Աաշակ՝ կաթողիկոսի եւ միւս իրանց աշակերտաց հետ՝ առաջ Կատուածաշունչ դիրքը թարգմանեց Հունաց լեզուից Հայոց լեզու, (410—430),

եւ յետոյ զանազան լեզուներից թարգմանեցին ուրիշ շատ գրեանք, որով մէր Հայոց եկեղեցին պայծառացաւ ամէն բարեկարգութիւնով եւ ուղիղ հաւատով։

Տէ՛ւշէպէան ժողովնէր։

Հայոց եկեղեցին ընդունում է միայն երեք տիեզերական ժողովներ, առաջին՝ Տիեզերական առաջին սուրբ ժողովը, որ 325 թուին Կոստանդնուպոլս Կայսեր ժամանակը եղաւ «Նիկիա քաղաքում, ուր ժողովեցան երեք հարիւր տասն և ութ հայրապետներ Արիստի հերետիկոսութիւնը հերքելու համար, որ ուրանում էր Վարիստոսի Կատուածութիւնը, եւ հաստատելով քրիստոնէական հաւատոյ ուղղափառութիւնը՝ սահմանեցին հաւատոյ հանգանակը, ուր ներկայ գտնւեցաւ Արիստոնէ հայրապետը՝ Լուսաւորչի փոքր որդին, եւ բերաւ Հայաստան սուրբ ժողովոյ կանոնները եւ հաւատոյ Հանգանակը։ Այս ժողովոյ տօնախմբութիւնը Հայաստանեայց եկեղեցին կատարում է միշտ վերացման խաչի շաբաթապահոց բարեկենդանի շաբաթ օրը։

Երկրորդ՝ Կոստանդնուպօլսոյ ժողովը, որ եղաւ 381 թուին մեծ թագաւորի ժամանակը, ուր հարիւր յիսուն հայրապետներ ժողովեցան Աակեգոնեանց, Եւնոմեանց եւ Վաղոինարեանց մոլորութիւնները հերքելու համար, որոնք ուրանում էին Հոգևոյն սրբոյ Կատուածութիւնը, ուր ներկայ գտնւեցաւ Լուսաւորչի թոռան թոռը՝ մեծն՝ Աերսէս եւ բերաւ Հայաստան նոյն ժողովոյ կանոնները։ Այս տօնը Հայոց եկեղեցին կատարում է բուն բարեկենդանի շաբաթ օրը։

Երրորդ՝ Եփիսոսի սուրբ ժողովը, որ եղաւ 431 թուին փոքր թագաւորի ժամանակը, ուր երկու հարիւր

Հայրապետներ ժողովեցան Կ. Եստորի մոլորութիւնը հերքելու
համար, որ ուրանում էր Վրիստոսի Աստուածութիւնը, եւ
Աստուածամայր չէր դաւանում Յարիամ սուրբ կուսին:
Այն ժողովը կանոնները եւ վճիռները բերին Հայաստան
Աշհակ Պարթեւի աշակերտները: Այս ժողովը տօնում ենք
Աստուածեանայ վերափոխման շաբաթապահոց բարեկենդանի
շաբաթ օրը:



286
~~8158~~

0026344

286

2013



NL0633912

ՀՀ Ազգային գրադարան



NL0026374



ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵ

95

1.	Տէր-Դ. և ոնդեան՝ Մայրենի Լեզու. ա. տարի.	35
2.	Մայրենի Լեզու. բ. տարի	40
3.	Մայրենի Լեզու. գ. տարի	45
4.	Մայր. Լեզ. քերակ. տարերբը. մ. ա. . . .	30
5.	Մայրենի Լեզուի քերակ. տարերբը. մ. բ . . .	50
6.	Բացատրութիւն Ս. Լեզուի ա. տաղուայ	60
7.	Հայորդի. Արբազ. պատ Հին Կտակ . . .	50
8.	Արբազան պատմութ. Նոր Կտակարանի . . .	50
9.	Աղայեանց. Աւոռոմն Մայրենի Լեզուի. ա. * տարի . . .	25
10.	Աւոռոմն Մայրենի Լեզուի. երկ. տարի . . .	40
11.	Աւոռոմն Մայրենի Լեզուի. երր. տարի . . .	45
12.	Ա. Մանդինեան՝ Ընտանեկան Ծխարչ. երր. տիպ . . .	25
13.	Դիւցազնական Ծխարչ. երր. տիպ . . .	30
14.	Խահապ. և Հայր. Ծխարչ. հինգ. տ . . .	65
15.	Բացատրութիւն Ընտ. Ծխարչի	75
16.	Հենչէլի թուար. խնդիրներ. մ. ա. . . .	40
17.	Հենչէլի թուար. խնդիրներ. մ. բ. . . .	50
18.	Բացատրութիւն ուսուցաց համար	30
19.	Համառօտ Մանկավարժութիւն . . 1 ր . .	50
20.	Տէր-Ստեփանեան՝ Ազգբունք քր. հաւատոց	50
21.	Կոստանեան՝ Ծաղկաբաղ. շրջան Ա. . . .	25
22.	Ծաղկաբաղ. շրջան Բ. . . .	60
23.	Ծաղկաբաղ. շրջան Գ. . . .	40
24.	Խախաշաւիլ.	25
25.	Եղիշէ ըստ Անձեւացեաց օրինակի	80
26.	Ոիմէնեան՝ Ծխարչագրութիւն. մասն բնական	60
27.	» մասն քաղաքական	60
28.	Վ. արծելեան՝ Քասագիբը թուարանութեան	70
29.	Յ. Գ. և Մ. Պ. Ժող. թուար. խնդիր. մ. ա. . .	40
30.	Խոյն մ. Պ. Կոտորակներ	45
31.	Արմագեան՝ Խախակիթանը. մ. ա. (գրաբալ)	40
32.	Տէր-Ստրգմանեան՝ Հայկական գեղագրութեան օրինակներ	25
33.	Վ. այելլագրութեան գասաւանդութեան եղանակը	20
34.	Աղանեան Կրօնի գառագիլը. երկրորդ տարի	25
35.	— + Երրորդ տարի	25
36.	Տէր-Գաւթեան՝ Ռուսк. слово. Учебникъ русс. языка	50
37.	Ալիևъ. „Первый шагъ“, учебникъ русс. языка	45
38.	Захаровъ. Сборникъ примѣровъ для пись. исчислениѧ	20
39.	Лартиновскій. Русскіе Писатели для уcole Ч. I. 1 ր	25
40.	Русскіе Писатели Ч. II 1 ր	25